ՀՏԴ : 929:947.925 Հովհաննիսյան

Doi:10.54503/0135-0536-2022.3-30

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ*

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր՝ Ա. Հովհաննիսյան, հայ ժողովուրդ, Ռուսաստան, Իսրայել Օրի, կողմնորոշում, պատմագրություն, գնահատական, շրջադարձ, «Դրվագներ», Պետրոս Մեծ, Անգեղակոթ, Մյունխեն, ավարտաճառ, անկախություն, հովանավոր, Մինաս վարդապետ, ուղեցույց:

Նախաբան

Հայոց պատմության ու պատմագրության առանցքային հիմնահարցերից են Հայաստանի և հայ ժողովրդի՝ պատմականորեն ձևավորված ռուսական քաղաքական կողմնորոշման, իսկ հետագայում դրա անմիջական տրամաբանական շարունակությունը հանդիսացող Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացման հարցերը. հարցեր, որոնք ավելի քան երեք դար է, ինչ գրավել են հայ հասարակական-քաղաքական ու պատմագիտական մտքի ուշադրությունը: Հայտնի է, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորումը մեծապես կապվում է XVII դարավերջին և XVIII դարասկզբին հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրու (1659–1711 թթ.)՝ բարդ ու հակասական, երբեմն էլ արկածալի դրվագներով հարուստ կյանքի ու քաղաքական գործունեության հետ: Սակայն մինչ օրս հայ պատմագրության մեջ հստակություն չկա հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում, դրան տրված քաղաքական ու պատմագիտական գնահատականին: Նկատի ունենալով, որ հայ պատմագրության մեջ Ի. Օրու կյանքի ու գործունեության և հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցերի քննության ու լուսաբանման հարցերում խոշոր ներդրում ունի հայ պատմագրության երախտավորներից պատմաբան, կուսակցական և պետական ականավոր գործիչ, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը (1887–1972 թթ.), ուստի հարկ ենք համարել ներկայացնել հիշյալ հարցերի շուրջ նրա պատմագիտական մեկնաբանություններն ու գնահատականները, մանավանդ որ մեր ժամանակների պատմաքաղաքական իրողությունների լույսի տակ հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումների և, մասնավորապես, ռուսական կողմնորոշման խնդիրը կարծես կրկին ստանում է արդիական հրատապություն ու նշանակություն:

Ա. Հովհաննիսյանի պատմագիտական դիտարկումները հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման գնահատականի հարցում

Հայ պատմագրության մեջ Ի. Օրու և հայ ժողովրդի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման ավելի հաճախ բախտորոշ ու շրջադարձային որակվող

---

* *Ներկայացվել է 25. VII. 2022 թ., գրախոսվել է 28. IX. 2022 թ., ընդունվել է տպագրության 09. XI. 2022 թ.:*

այդ իրադարձության խորագիտակ հետազոտող Ա. Հովհաննիսյանի՝ պատմագիտական հարուստ ժառանգության մեջ առանձնանում է հայ ազատագրական մտքի պատմությանը նվիրված նրա երկհատոր մենագրությունը[1]:

Ամենից առաջ արձանագրենք, որ վաստակաշատ պատմաբան, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանն անցել է գիտական ու պետական-կուսակցական գործունեության երկար ճանապարհ՝ XX դարասկզբից մինչև 1970-ականի սկիզբը: Ի. Օրու և դրա հետ կապված հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցերում ակադեմիկոսի պատմագիտական ժառանգության ուսումնասիրության ընթացքում, ըստ ժամանակային շրջափուլերի, կարելի է նկատել նրա մոտեցումների, մեկնաբանությունների ու գնահատականների որոշակի փոփոխություն: Ստացվել է այնպես, որ նա ապրել ու գործել է հասարակական-քաղաքական (ֆորմացիոն) առումով, փաստորեն, երկու դարաշրջանում՝ նախախորհրդային և խորհրդային: Ընդ որում, նախախորհրդային շրջանում նա ուսանել է նաև արտասահմանում՝ Գերմանիայում, և 1913 թ. հաջողությամբ պաշտպանել դոկտորական ավարտաճառ, իսկ խորհրդային շրջանում վարել է կուսակցական-պետական՝ ընդհուպ Հայկոմկուսի ԿԿ-ի առաջին քարտուղարի (1922–1927 թթ.) ամենաբարձր պաշտոն, բայց և նման պաշտոնավարությունն ամենևին էլ երաշխիք չի եղել, որ նա չենթարկվեր 1930-ական թվականների քաղաքական անհիմն բռնաճնշումներին[2]:

Ա. Հովհաննիսյանի՝ նախախորհրդային և խորհրդային շրջանի աշխատությունների բովանդակության համեմատական ուսումնասիրությունն ակներև ցույց է տալիս, որ, ի մասնավորի, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման պատմագիտական գնահատականի հարցերում, կապված ժամանակաշրջանի ու հանգամանքների գաղափարաքաղաքական փոփոխությունների, խորհրդային-կուսակցական քաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրայի) և այլնի հետ, նրա երկարամյա՝ հինգ-վեց տասնամյակների գիտահետազոտական աշխատանքի ընթացքում, հասկանալի պատճառներով, մի շարք հարցադրումների մեկնաբանություններն ու գնահատականները գիտնականի մոտ կրել են վերարժևորումներ և փոփոխություններ:

Ըստ էության, Գերմանիայում ուսանած երիտասարդ պատմաբան Ա. Հովհաննիսյանը 1913 թ. Մյունխենում պաշտպանած «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դոկտորական ավարտաճառում[3] և 1921 թ. Էջմիածնում լույս ընծայած «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» գրքույկում[4] մի տեսակ վերապահությամբ ու կասկածանքով է խոսում 1699 թ. Անգեղակոթի ժողովում հայ մելիքների կողմից Ի. Օրուն տրված լիազորութ-

---

[1] *Տե՛ս* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957,* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1959:*

[2] Մ ա ն ո ւ կ յ ա ն. *1999, 45:*

[3] *Նրա գերմաներեն ավարտաճառը թարգմանվել է հայերեն և հրատարակվել «Հովհաննիսյան ինստիտուտի» կողմից (տե՛ս* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *2016):*

[4] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1921: Նշենք, որ քննախույզ այդ աշխատության մասին գրախոսականով բարձր կարծիք է հայտնել «սպեցիֆիկ» Դ. Անանունը՝ միաժամանակ Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրության խնդրում անձնապես որևէ երաշխիք չտեսնելով ո՛չ Եվրոպայից և ո՛չ էլ Ռուսաստանից: «Ո՞վ կարող է երաշխաւորել,– գրում է Դ. Անանունը,– թէ անվերապահօրէն նեստուելով ռուսական քաղաքականութեան հունը, նոր յուսախաբութիւն չպիտի սպասէ մեր օրերի մելիքներին» (*Ա ն ա ն ո ւ ն. *1921/1922, 256):*

յամբ՝ Պետրոս Մեծին ուղղված, այսպես կոչված, «ճերմակ թղթի» իրավունքով լրացված դիմում-նամակների օրինականության և, ընդհանրապես, հայերի ռուսական կողմնորոշման (արևելյան) մասին: Եվ միանգամայն այլ ձևակերպում, միտք ու գնահատական ենք տեսնում արդեն 1955 թ. Խորհրդային Հայաստանում գործնականում նույն թեմայով պաշտպանած դոկտորական դիսերտացիայում, որը մենագրության ձևով, ինչպես նշվեց, լույս է տեսել նրա հանրահայտ ու արժեքավոր «Դրվագների» երկհատորյակում[5]*: Այդտեղ ականավոր պատմաբանը խոսում է հայ ազատագրության լեգենդում ու քաղաքական մտքում XVIII դարի սկզբին դեպի Ռուսաստան հայերի կատարած դարակազմիկ շրջադարձի մասին, որի ժամանակ ռուսական պետությունը ներկայացվում է որպես «հայ քաղաքական մտքի հուսակայան»*[6]*: Մեկ այլ տեղ Ա. Հովհաննիսյանը դեպի Ռուսաստան Օրու դիմադարձը համարում է շրջադարձ «հայ ազատագրական մտքի պատմության մեջ»: Նրա բնորոշմամբ՝ «գոցվում էր հին մի դար և բացվում նորը»*[7]*: Իբրև եզրահանգում, ըստ Ա. Հովհաննիսյանի՝ «Օրին առաջինն էր, որ մոսկովյան իր ծրագրով դուրս բերեց հայ ազատագրական շարժումն ու հայ դիվանագիտական բանագնացությունները կրոնադավանաբանական հին փակուղուց» և այլն*[8]*: Դարձյալ «Դրվագների» պատկերմամբ՝ Ի. Օրու քաղաքական դեգերումներն, ի վերջո, «արևմտաեվրոպական դիվանագիտական մոլար շավիղներից տարավ դեպի Մոսկովյան պետության շիտակ ուղիները»*[9]*: Այդ նույն մտքերն ու դատողություններն են ձևակերպված նորահիմն «Պատմաբանասիրական հանդեսի» առաջին իսկ համարում զետեղված Ա. Հովհաննիսյանի՝ հայերի ռուսական կողմնորոշմանը նվիրված հոդվածում, որում հեղինակը XVIII դարասկզբի Ի. Օրու քաղաքական քայլը որակում է «Հայ ժողովրդի պատմության համար անկյունաղարձային» և այլն*[10]*:*

Կրկին համադրելով ու համեմատելով Ա. Հովհաննիսյանի աշխատություններում Ի. Օրու և նրա քարտուղար ու թարգմանիչ Մինաս վարդապետ Տիգրանյանի գործունեության ու հայ աշխարհիկ և հոգևոր շրջանակների՝ դեպի Ռուսաստանը հանդես բերած դիրքորոշումների պատկերը՝ կարելի է ակներև տեսնել, թե կեսդարյա միջակայքում մտքերի, դատողությունների ու գնահատականների ինչպիսի փոփոխություն է կատարվել նրա մոտ: Այսպես, հայ-ռուսական կողմնորոշմանը նվիրված «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը» աշխատությունում երիտասարդ գիտնական Ա. Հովհաննիսյանը զարգացնում է այն միտքը, որ տակավին 1720-ական թվականները «ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնությունն չի սնել, այլև ուղեցույց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մէկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»[11]*: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 1699 թ. Անգեղակոթի ժողովից, Ռուսաստանի գործուն միջամտության կամ օգնությանը դիմելու հարցում, Ի. Օրին և նրա*

---

[5] *Տե՛ս* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957, 8–9,* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1959, 415, 632:*
[6] *Տե՛ս* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957, 91:*
[7] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1959, 415:*
[8] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1959, 632:*
[9] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957, 8:*
[10] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1958, 65:*
[11] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1921, VI:*

քարտուղար Մինաս վարդապետը հանձնարարականներ չեն ունեցել, որպեսզի բանակցություններ վարեին Ռուսաստանի բարձր ղեկավար շրջանների հետ: Նրանց մոտ բացակայել է հայ մելիքների կողմից Ռուսաստանին դիմելու վավերական որևէ փաստաթուղթ, այլ խոսքով՝ մելիքները Ռուսաստանի օգնությանը դիմելու որևէ գրություն կամ անգամ բանավոր լիազորություն չեն տվել[12]*: Այնուհետև նա հավելում էր. «Հայերի այսպէս կոչված «ռուսական օրիենտացիան» չօշափելի երևոյթ չէր հայ կեանքում»*[13]*:*

Այստեղից էլ, երիտասարդ պատմաբան Ա. Հովհաննիսյանի դիտարկմամբ, մեջտեղ է գալիս Օրու և Մինաս վարդապետի կողմից օգնության հարցով ռուսական ցարին ուղղվելիք գրությունները կեղծելու, հետին թվով գրելու կամ նախկինում կազմված գրությունները խմբագրելու հանգամանքը, որոնք էլ հիմք են տալիս կասկածելու դրանց արժանահավատությանը[14]*: 1910–1920-ական թվականներին Ա. Հովհաննիսյան–պատմաբանը, հենվելով բանասեր և պատմաբան* Կարապետ Եղյանի *(1835–1905 թթ.) կազմած սկզբնաղբյուրի նշանակություն ունեցող արժեքավոր ժողովածուի վավերագրերի վրա*[15]*, զարգացնում է այն միտքը, որ Ռուսաստանից ոչ միայն օգնություն չէր ակնկալվում, այլ ավելին՝ «կար ըստ երևոյթին ընդդիմադիր տրամադրութիւն՝ ուղղված հայերի քաղաքական բախտը Ռուսաստանի հետ կապելու մտքին»*[16]*: Օրու նկարագրությամբ՝ մի վավերագրում պատմվում է, որ «ռուսներն առիթ են ունեցել հասկացնելու հայերին Հայաստանը գրաւելու նկատմամբ իրանց ունեցած դիտաւորութիւնը, և սակայն հայ մելիքները այդ լսել անգամ չեն կամեցել՝ երկյուղ կրելով, թէ այդ նաւճումի հետևանքով հարկադրւած կարող են լինել փոխել իրանց դաւանանքը, ընդունել յունական հերձւածը»: Շարունակելով այս նույն միտքը հայ մելիքների մտայնությունները նկատի առնելով՝ Օրին հավաստիացրել է. «Հայերը կզերադասէին լինել անհաւատների ստրուկները, քան ապրել հունադաւանների տիրապետութեան ներքո (ընդգծումը մերն է– Ա. Հ.)»*[17]*: Այդ նույն հիմնավորմամբ Ա. Հովհաննիսյանը, Կ. Եղյանի վավերագիր ժողովածուից հղում անելով, նշում է, որ հայ մելիքները չեն ցանկացել, որ Ռուսաստանը (ցարը) ազատագրի հայերին, «քանզի վտանգ կար, որ դրանով իրենց կպարտադրվեր նաև հունական (ուղղափառ) հերձվածը»*[18]*: Մեկ այլ տեղ դարձյալ կրկնվում է այդ նույն միտքը՝ «ինչպես Օրին ինքն է ասում՝ հենց «հունական հերձվածն» է այն ուրվականը, որը հայերին ամենաշատն է հեռացնում Ռուսաստանից»*[19]*:*

Վերն արված շարադրանքում ակներև է դառնում հայ ժողովրդի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում պատմաբան Ա. Հովհաննիսյանի տված գնահատականների կտրուկ փոփոխությունը. այն է՝ մեր կարծիքով, XX դարասկզբներին նրա տված գնահատականներն այդ հարցում, ժամանակաշրջանի ոգուն համահունչ, պատմագիտորեն ավելի հավասարա-

[12] Տե՛ս Հովհաննիսյան. 1921, 53:
[13] Հովհաննիսյան. 1921, 53:
[14] Յովհաննիսեան. 1915, 775:
[15] Տե՛ս Эзов. 1898.
[16] Հովհաննիսյան. 1921, 53:
[17] Տե՛ս Հովհաննիսյան. 1921, 54:
[18] Հովհաննիսյան. 2016, 249:
[19] Հովհաննիսյան. 2016, 323:

կշիռ, զուսպ ու հիմնավոր են, իսկ արդեն խորհրդային-կոմունիստական ժամանակաշրջանում՝ «Դրվագներում» և հոդված-հրապարակումներում, հասկանալի պատճառներով ռուսական-խորհրդային քաղաքական կողմնորոշումը քարոզչական նպատակներով ընդգծելու համար, այն ներկայացված է որպես պատմական բեկում ու շրջադարձ:

Այդպիսով, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի աշխատություններում, ըստ պատմական շրջափուլերի՝ նախախորհրդայինից մինչև խորհրդային ժամանակաշրջան, հայ ժողովրդի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում տեղի է ունեցել գնահատականների վերարժևորումներ՝ օբյեկտիվ, անաչառ ու զուսպ գնահատականներից մինչև հասկանալիորեն՝ խորհրդային գաղափարաքաղաքական կոնյունկտուրայի ազդեցությամբ, թույլ է տրվել գիտական չափավորության շրջանակներից դուրս Ռուսաստանին միացման հարցերում հաճախ միակողմանիություն, չափազանցվածություն ու գերագնահատում:

Այդ ամենից բացի, գնահատանքի է արժանի Ա. Հովհաննիսյանի՝ գիտականորեն հիմնավոր ու համոզիչ դիտարկումն այն մասին, որ XVII–XVIII դարերում հայ ազատագրության գաղափարն ունեցել է սոցիալ-քաղաքական խոր արմատներ և պատմական ավանդույթի ուժով՝ գաղափարական նախադրյալներ: Այս կապակցությամբ նա իրավացիորեն մերժում է խորհրդային պատմագիտության որոշ շրջաններում տարածում ստացած, միակողմանի և իրականում գիտականությունից հեռու քարոզչական նպատակներ հետապնդող այն խոսույթը, թե, իբր, միջնադարում հայ ազատագրական միտքը կարող էր ունեցած լինել քաղաքական մեկ կողմնորոշում և հասկանալի է՝ մի կողմնորոշում ասելով՝ ո՞ր պետությունը նկատի ունեին: Նա զարգացրեց այն միտքը, որ, ինչպես հայ ժողովրդի պատմության մեջ, ընդհանրապես, նույն կերպ և հայ ազատագրական շարժումներում, բնականաբար, առկա են եղել հասարակական-քաղաքական տարբեր հոսանքներ և ուղղություններ՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական և քաղաքական կոնկրետ հանգամանքներով, պայմաններով ու պատմական դեպքերի զարգացումներով[20]: Հենց դրանով, օրինակ, կարելի է բացատրել XVII դարավերջի և XVIII դարասկզբի հայ ազատագրական շարժման վառ ներկայացուցիչներից մեկի՝ Ի. Օրու դիրքորոշման փոփոխությունը, այն է՝ Արևմուտքից (եվրոպականից) դեպի Ռուսաստան:

Այս առնչությամբ, մեր կարծիքով, այնքան էլ փաստարկված և հիմնավոր չէ Ա. Հովհաննիսյանի՝ 1913 թ. պաշտպանած դոկտորական ավարտաճառի՝ 2016 թ. թարգմանիչ-հրատարակիչ հեղինակային խմբի կողմից վերահրատարակված գրքի նախաբանում տրված այն մեկնաբանությունը, թե այդ պաշտպանության ժամանակ Ա. Հովհաննիսյանի ձեռքին եղել են հնացած տվյալներ և ամենից առաջ՝ «մելիքների անունից Օրիի գրած նամակների հարցում», որ արդեն «Դրվագներ»-ի երկհատորյակում նոր հայտնաբերված փաստական տվյալներով նա այդ «հարցը լուծել է»: Այնինչ, Ա. Հովհաննիսյանի ավարտաճառի գերմաներենից հայերեն թարգմանած և հրատարակության պատրաստած նույն հեղինակային խումբը վերահաստատում է, որ «Դրվագների» երկհատորյակն ամբողջությամբ կառուցված է այդ ավարտաճառի շարադրանքի ու բովանդակության հիման վրա[21]: Մեր համոզմամբ էլ, երկու

[20] Տե՛ս Հովհաննիսյան. 2016, 485:
[21] Հովհաննիսյան. 2016, 20:

տեքստերի համեմատությունից պարզվում է՝ թե՛ 1913 թ. դոկտորական ավարտաճառում և թե՛ խորհրդային ժամանակաշրջանում՝ 1955 թ., դոկտորականը բովանդակող «Դրվագներում» հայ-ռուսական օրիենտացիայի հարցի շուրջ օգտագործված հիմնական սկզբնաղբյուրը հայցորդ Ա. Հովհաննիսյանի համար եղել է Կ. Եզյանի՝ արդեն հիշատակածս փաստաթղթերի հարուստ ժողովածուն: Իրազեկենք՝ մինչ Կ. Եզյանի կողմից այդ ժողովածուն լույս կընծայվեր, դրանից մի քանի տարի առաջ՝ 1894 թ., առաջին անգամ Մյունխենում լույս էր տեսել Ի. Օրուն նվիրված մի ուսումնասիրություն, որի հեղինակը պրոֆ. Կարլ Ֆ. Հայդելն էր: Ի դեպ, վերջինս իր տրված գրախոսություն-եզրակացությունում դրական կարծիք է հայտնել 1913 թ. հունվարին հայցորդ Ա. Հովհաննիսյանի՝ հրապարակային պաշտպանության ներկայացրած «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դոկտորական ավարտաճառի մասին[22]*:*

Հարցի պատմագիտական գնահատականի առումով դարձյալ կարելի է ընդգծել, որ ավարտաճառի պաշտպանության ժամանակ երիտասարդ հայցորդ Ա. Հովհաննիսյանը, անդրադառնալով XVIII դարում պետրոսյան Ռուսաստանի տարածաշրջանում հետապնդած ռազմավարական շահերին ու նպատակներին, ապակուսակցական դիրքերից, անկողմնակալ, գիտականորեն հիմնավոր ու համոզիչ ներկայացրել է հետևյալ ձևակերպումը. «Ցարին, ում ակտիվ միջամտությունը հօգուտ հայկական շարժման այժմ դարձել է կարևոր, հետաքրքրում էր ոչ թե Հայաստանի ազատագրումը (ընդգծումը մերն է – Ա. Հ.), այլ Պարսկաստանում բուն ռուսական շահախնդրությունների ոլորտի՝ Կասպից ծովի առափնյա շրջանների նվաճումը: Հայերը նրան ընդամենը պետք է օգնեին տիրանալ այդ տարածքներին»[23]*: Բերված միտքը ևս հաստատում է, որ ժամանակին երիտասարդ պատմաբանը լուրջ վերապահություն է ունեցել հայերի հանդեպ Ռուսաստանի վարած քաղաքականության հարցում, ինչը հետագայում հաստատվեց: Մեր ժամանակներում ևս, Հայաստանի ու հայ ժողովրդի ազգային-պետական քաղաքական շահերի հաշվառման առումով հայ հանրությանը խորհելու տեղիք է տալիս:*

Հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցը

Հայ պատմագրության մեջ տարակարծություն կա հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման ստույգ ժամանակի հարցում: Ա. Հովհաննիսյանն իր՝ վաղ նախախորհրդային աշխատություններում հայերի ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում նկատել է տալիս, որ մինչև XVII դարավերջերը հայ քաղաքական մտքում «ռուսական օրիենտացիան բանուկ ուղիներ չունէր տակաւին»[24]*: Ավելին, պատմաբանը հայերի՝ ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում առաջ քաշեց այն համոզումը, որ նույնիսկ «մինչև 1720 թ. ռուսական օրիենտացիան ոչ միայն հայ ժողովրդական մասսաների քաղաքական մտայնությունը չի սնել, այլև ուղեցոյց չի հանդիսացել վարիչ դասերից որևէ մէկին նրա քաղաքական որոնումների ճանապարհին»*[25]*:*

---

[22] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 480–481:
[23] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2016, 427:
[24] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, V:
[25] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, VI:

Հարկ է նշել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում Ա. Հովհաննիսյանի արտահայտած այդ մտքերը ժամանակին ոչ միանշանակ է ընդունվել խորհրդային պատմագիտության առանձին հեղինակների կողմից: Այսպես, հայ-ռուսական հարաբերությունների քաջագիտակ մասնագետ Վ. Ոսկանյանը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորումը համարում է XVII դ. երկրորդ կեսը[26]: Մինչդեռ Ա. Հովհաննիսյանը դրա սկզբնավորումը կապում է երկու հայ նշանավոր այրերի՝ Իսրայել Օրու և նրա քարտուղար Մինաս վարդապետ Տիգրանյանի գործունեության հետ: Ի դեպ, վերջինս արմատներով եղել է արևմտահայ (խարբերդցի), տիրապետել է մի շարք օտար լեզուների և շատ շրջագայել:

Դեռ դոկտորական ավարտաճառում Ա. Հովհաննիսյանը հայերի ռուսական կողմնորոշման հարցում արտահայտել է հետևյալը. «Առնվազն մինչև այժմ մենք չունենք որևէ տեղեկություն այն մասին, որ հայերը մինչև Իսրայել Օրիի ժամանակներն ինչ-ինչ քաղաքական ակնկալություններ են կապել Ռուսաստանի հետ»[27]: Այդ նույն միտքը հայրենիք վերադարձած պատմաբանը պնդել է Մայր Աթոռի «Արարատ» հանդեսում 1915 թ. տպագրած մի հրապարակման մեջ: Այդտեղ նա, համադրելով հիմնականում Կ. Եզյանի ժողովածուի կասկածանք առաջացնող մի քանի երերուն փաստերը, իսկ մյուս կողմից էլ՝ հաշվի առնելով XVII դարում հայ-ռուսական հարաբերությունների պատմության սակավ ու աղքատիկ պատկերը, հավանական չի համարել, թե Հակոբ Ջուղայեցի (1655–1680 թթ.) կաթողիկոսի ժամանակ հայերը լուրջ ակնկալություն ունեցած լինեին մոսկովյան թագավորությունից, և հազիվ թե այն ժամանակ հայերը իրենց քաղաքական բախտը կապեին բացառապես Ռուսաստանի հետ[28]: Եվ հարկ է ընդգծել, որ կես դար անց պատմաբան Ա. Հովհաննիսյանը, հանդես բերելով սկզբունքայնություն, վերը բերված դատողությունը (միտքը) փոքր այլ ձևակերպմամբ, ըստ էության, վերահաստատել է «Դրվագներում», որ իրեն հայտնի չէ, և, առհասարակ, գոյություն չունի նման պատմական փաստ, թե մինչև XVIII դ. սկիզբը հայերը իրենց հույսը դրած լինեն բացառապես Մոսկովյան պետության վրա[29]: Նշանակում է՝ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցում Ա. Հովհաննիսյանի տեսակետը եղել է անփոփոխ (մնայուն), իսկ ժամանակագրական առումով դա համարվում է 1720-ական թվականները, *երբ, ինչպես հայտնի է, 1722 թ. Պետրոս Մեծի Կասպիական արշավանքի հետ կապված Արցախ-Սյունիքում (Կապան) սկսվեց ազատագրական պայքարը թուրք-պարսկական բռնապետությունների դեմ:*

Օրու թույլ տված փաստաթղթային կեղծիքների բացահայտումն Ա. Հովհաննիսյանի կողմից

Հիշեցնենք, որ Ի. Օրին իր առջև դրված խնդիրը՝ Ռուսաստանի օգնությամբ հաջողացնելու համար, մինչև իսկ դիմել է պատմական իրողությունների և անգամ փաստաթղթերի կեղծման: Ընդ որում, նրա անունով կազմված նա-

---

[26] *Ոսկանյան. 1948, 76, Ոսկանյան. 1957, 46:*
[27] *Հովհաննիսյան. 2016, 41:*
[28] *Յովհաննիսեան. 1915, 776:*
[29] *Հովհաննիսյան. 1957, 14:*

մակների և գրությունների ձեռագրային հետազոտության արդյունքում Ա. Հովհաննիսյանը հանգել է այն հետևության, որ դրանք կազմված են անվարժ, և հիմքեր կան պնդելու, որ Օրին եղել է ընդամենը «թելադրող»[30]: Այսպես՝ 1701 թ. Պետրոս Մեծին ուղղված լատինագիր մի վավերագիր գրության մեջ նշվում է, որ Հայաստանի անկախության կորստից հետո՝ իրեն նախորդած երկուսուկես դարերի ընթացքում, Ադամի որդիները հույսով սպասել են «Մեսիայի գալստին», որ «Մոսկովյան օգոստափառ տնից պիտի գա մեծ մի իշխան և իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը»[31]:

Ստույգ ասած, Օրիի այդ գրության մեջ, իսկապես, տեղ է գտել պատմական իրողությանը չհամապատասխանող կեղծիքներ, և հասկանալի է, թե ինչո՞ւ: Օրինակ, որ Ռուսաց ցարից օգնության մասին արտահայտվելիս, նա ընդամենը կարող էր հենված լիներ հնից եկած և միջնադարյան Հայաստանում, հատկապես՝ խաչակրաց արշավանքների շրջանում, հավելված, խմբագրված ու տարածում գտած, հեքիաթի նմանվող լեգենդ-գուշակությունների ու տեսիլքների վրա: Այդպիսիններից էր «Դաշանց թուղթ» կոչված լեգենդը[32]. իբրև IV դարի սկզբներին Հռոմի Կոստանդինոս 1-ին Մեծ կայսրի և Հայոց Տրդատ 3-րդ Մեծ թագավորի միջև, ըստ Ագաթանգեղոս պատմիչի, դաշինք է կնքվել՝ «Դաշինս կռէր ընդ նմա»[33]: Եվ, իբր, Ս. Կոստանդինոս 1-ին Մեծ կայսրը «մարգարեական» պատգամ է տվել, թե ապագայի իր սերունդների ձեռքով է լինելու հայոց թագավորության վերականգնումը: Ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը «Դաշանց թուղթը» համարում էր «հերյուրանք»[34]:

Այդ նույն իմաստով դարձյալ գոյություն ունի IV դարին վերագրվող մեկ ուրիշ՝ սբ. Ներսես Ա Մեծ Պարթևի (353–373) «Տեսիլքն» այն մասին՝ իբրև նա մահվան մահճում կանխագուշակել էր հայկական պետականության կործանումը, և, որ հայ ժողովուրդը հռոմեացիների կամ ֆրանկների[35] օգնությամբ, երկար տարիներ անց պիտի ազատագրվի[36]: Ի հավելում վերն ասվածի՝ գոյություն ունի նաև Հովհաննես Կոզեռն վարդապետի (XI դար) «Կոզեռն» կոչված[37], դարձյալ հայ եկեղեցու հայրերից Ներսես I Պարթևին վերագրվող տեսիլքի ևս մի վերախմբագրված տարբերակ, որում կրկին խոսվում է եվրոպական երկրների՝ ֆրանկների, հռոմեացիների, տևտոնների և այլ «խաչակիրների» կողմից ակնկալվող, Հայաստանի ազատագրման հեքիաթի նմանվող մարգարեության մասին և այլն:

Սբ. Ներսես Մեծի գուշակային կանխատեսմամբ՝ հայերի անմիաբանության պատճառով տեղի կունենա Հայաստանի քաղաքական քայքայում, և իրար

---

[30] *Տե՛ս* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1921, 31–32:*

[31] Э з о в. 1898, док. но. 36, 75.

[32] *Վավերագիր այդ նյութն առաջին անգամ տպագրվել է 1683 թ. Վենետիկում հայերեն, կա նաև դրա իտալերեն թարգմանությունը:*

[33] Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. *1983, 487–488:*

[34] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957, 74:*

[35] *«Ֆրանկ» անվան տակ պետք է հասկանալ լատին, տևտոն (գերման), մաջար (հունգար) և պավոն (լեհ) լեզուներով խոսող բոլոր ժողովուրդներին (տե՛ս* Ա ն ա ս յ ա ն. *1961, 214):*

[36] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957, 58–80, նաև՝* Ա ն ա ս յ ա ն. *1961, 52:*

[37] *Տե՛ս* Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *1957, 45, 197:*

կփոխհաջորդեն օտար տիրապետությունները՝ ներառյալ սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների ներխուժումները, մինչև որ, ի վերջո, կազատագրվի Եվրոպայի (քրիստոնյա մի հզոր թագավորի) կողմից, ու կվերականգնվի Հայոց թագավորությունը[38]*: Ինքնին հասկանալի է, որ IV դարում ապրած Ներսես I կաթողիկոսը չէր կարող նման բան գրել՝ ակնարկելով սելջուկների և մոնղոլների մասին: Իսկ եթե Ներսես Մեծը գուշակային ընույթի ինչ-որ բան գրել է, ապա ռազմաքաղաքական հանգամանքների բերումով դրանք ստեղծագործվել ու հավելվել են միջնադարում: Հայ պատմագրության երախտավոր* Լեոն *(Առաքել Բաբախանյան, 1860–1932)* Ներսես Մեծի *«Տեսիլքը» համարում է մի չինծու մարգարեություն՝ հորինված հոգևորականության ձեռքով, թե Արևմուտքը գալու է զենքով Հայաստանն ազատագրելու և Հայոց թագավորությունը վերականգնելու*[39]*: Մեկ այլ տեղ Լեոն Ներսես Մեծ Պարթևին վերագրված սույն մարգարեությունը համարում է հայ կղերական դիվանագիտության ստեղծագործություն. իբրև Քրիստոնյա Եվրոպայից է գալու Հայաստանի ազատությունը*[40]*:*

Եվ այն բանից հետո, երբ Հայաստանի ազատագրության հարցում XVIII դարասկզբին Ի. Օրին հանգամանքների բերումով քաղաքական դիմաշրջում կատարեց Արևմուտքից դեպի Ռուսաստան, բնականաբար, նա Ներսես Մեծի «Տեսիլքի» ոգով, իր քաղաքական նպատակադրումն իրագործելու և քրիստոնյա Հայաստանի ազատագրության գործը գլուխ բերելու համար, այս անգամ մեծ և զորեղ իշխանի անվան տակ, կոնկրետացրեց ու Պֆալցի կուրֆյուրստ Հովհան Վիլհելմի փոխարեն անհրաժեշտաբար սկսեց հասկանալ Մոսկովյան *մեծ իշխանին: Բայց դժվար չէ պատկերացնել, որ Ներսես Մեծի ժամանակ խոսք չէր կարող լինել ինչ-որ ռուսական երկրի ու առավել ևս՝ պետության մասին, քանզի հետներսիսյան մի քանի դարերում ընդամենը կարող էր խոսք լինել արևելաեվրոպական-սլավոնական և այլ տափաստանային ցեղերի ու ժողովուրդների մասին, որոնց հայ հանրույթը բնավ տեղյակ էլ չի եղել: Կարելի է պնդել, որ նշված «տեսիլքներում» ռուսական իշխանի կերպարը ստեղծագործել են հետագա գրիչները, իսկ ավելի ստույգ՝ հետո նաև Ի. Օրին ու իր գրագիր քարտուղար Մինաս վարդապետը: Հասկանալի է, որ Ա. Հովհաննիսյանը, հայագիտության մշակ Հ. Անասյանը, իսկ ավելի վաղ՝ վաստակաշատ պատմաբան Լեոն քննադատաբար ու երբեմն հեգնանքով են վերաբերել նման տեսիլք-գուշակություններին:*

Կ. Եզյանի հրապարակած վավերագրերի, հայ-ռուսական հարաբերություններին նվիրված ու հետագայում լույս տեսած փաստաթղթերի ժողովածուների[41] *և այլ նյութերի քննական վերլուծությունների հիման վրա Ա. Հովհաննիսյանը ևս իր վաղ աշխատություններում գալիս է այն հիմնավոր եզրահանգման, որ հայ մելիքների ռուսական կողմնորոշմանը նպաստ բերելու համար Մինաս վարդապետը իր հերթին նույնպես երբեմն դիմել է փաստաթղթե-*

---

[38] *Տե՛ս* Հովհաննիսյան. *2016, 43:*

[39] Լեո. *1934, 95:*

[40] Լեո. *1934, 114:*

[41] *Տե՛ս* Армяно-русские отношения в XVII веке (сб. док.). 1953; Армяно-русские отношения в первой трети XVIII века (сб. док.). 1964, т. 2, ч. 1; Армяно-русские отношения. 1967, т. 2; Армяно-русские отношения. 1978, т. 3.

րի կեղծման. դրանք նշել է հետին թվով, կամ էլ՝ հօգուտ ռուսական օրիենտացիայի խմբագրական փոփոխություններ ու լրացումներ կատարել. «Եվ իրօք,– հավելում է Ա. Հովհաննիսյանը,– վաւերական ճանաչւած աղբյուրներից և ոչ մէկը ԺԸ (XVIII դ. – Ա. Հ.) դարի սկզբներում չի վկայում ռուսական օրիենտացիայի ժողովրդականութեան մասին: Ռուսասիրական հակումներ արտայայտողներից հայերի մէջ այդ շրջանում աչքի էր ընկնում մի մարդ միայն՝ Գանձասարի կաթողիկոս Եսային»[42]*:*

Խոսելով հայերի ու Հայաստանի ռուսական կողմնորոշման հարցի մասին՝ պետք է փաստել, որ բացի Ա. Հովհաննիսյանից, դրան անդրադարձել են այդ շրջանի պատմության հարցերով զբաղվող խորհրդային ու ոչ խորհրդային մեծաթիվ պատմաբաններ, հայագետներ և ուրիշ այլ հետազոտողներ: Այսպես, հայագետ Հակոբ Անասյանը նույնպես գտնում է, որ XVII դ. այն շրջանն էր, երբ դեռ նոր էր «հող պատրաստվում հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման համար և միայն 18-րդ դարի սկզբներին է, որ Ռուսաստանը դարձավ հայերի ազատագրական հույսերի հիմնական խարիսխը»[43]*: Խորհրդային շրջանի մեկ ուրիշ պատմաբան Մանվել Զուլալյանը ևս գտնում է, որ երկար դեգերումներից հետո «հայ ազատագրական միտքը հանգեց միակ ճիշտ եզրակացության՝ գտնելով, որ հայ ժողովրդի ազգային ազատագրումը հնարավոր է միայն մեծ ու հզոր Ռուսաստանի ռազմական աջակցությամբ»*[44]*: Հասկանալ կարելի է, որ խորհրդային պատմագրությունը գաղափարաքաղաքական առումով պարտավորված էր ցույց տալ, ընդգծել հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման դերն ու անանց նշանակությունը, քանզի այլ մեկնաբանության և գնահատականի պարագայում հետևելու էին գաղափարաքաղաքական մեղադրանքներ, խորհրդային կոմունիստական ժամանակաշրջանին բնորոշ անցանկալի հետևանքներով: Իսկ արդեն հետխորհրդային շրջանում պրոֆ. Վ. Դիլոյանը, խոսելով հայ ժողովրդի կողմնորոշման հարցի մասին, ընդգծում էր. «Կողմնորոշում չի նշանակում կուրորեն որևէ հզորի գիրկը նետվել»*[45]*: Տվյալ դեպքում, նա նկատի ուներ Ռուսաստանը:*

Ինչ վերաբերում է վաստակաշատ պատմաբան Լեոյի կարծիքը հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման սկզբնավորման հարցում Օրու խաղացած դերակատարությանը, ապա նրա տված գնահատականը եղել է միանշանակ և ժամանակային առումով անփոփոխ: Նա չի գերագնահատել Օրու գործունեության ու ռուսական կողմնորոշման հարցում խաղացած վճռական դերակատարությունը: Մի առիթով նա շեշտում է, որ Օրիով է սկսվում «ռուսապաշտական շարժումը»[46]*: Սակայն դա ամենևին էլ չէր նշանակում, թե նա հավանություն էր տալիս նման ծայրահեղ ռուսասիրական դիրքորոշմանը:*

«Հայոց պատմության» անկախության շրջանի ակադեմիական բազմահատորյակում ընդհանուր գնահատական տալով Ի. Օրիի արգասավոր գործու-

---

[42] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 56: Այստեղ խոսքը ռուսական կողմնորոշման ջատագով, Գանձասարի կամ Աղվանից կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանի (1702–1728 թթ.) մասին է:

[43] Ա ն ա ս յ ա ն. 1961, 6:

[44] Զ ո ւ լ ա լ յ ա ն. 1980, 5:

[45] Դ ի լ ո յ ա ն. 1995, 18:

[46] Լ ե ո. 1984, 117:

նեությանը, բայց չնկատելով նրա կողմից առանձին դեպքերում, հանգամանքների բերումով թույլ տված շեղում-կեղծիքներին՝ մասնավորաբար կարդում ենք. «Իսրայել Օրու հայրենանվեր գործունեությունը 17-րդ դարավերջի–18-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական ոգորումների ամենանշանավոր դրվագներից է: Իսրայել Օրին կանխադրեց հայ ազգային-ազատագրական պայքարում ռուսական կողմնորոշման, այսինքն՝ Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական դաշինքի գաղափարը, մշակեց Հայաստանի ազատագրության և հայկական պետականության վերականգնման քաղաքական ծրագիրը՝ ազգային-ազատագրական պայքարում շեշտը դնելով ներքին ապստամբական լայն շարժման վրա: Հայ ժողովրդի ներքին նախաձեռնությունը պետք է լիներ սեփական պետականության վերակերտման երաշխիքը: Իսրայել Օրու արծարծած ազատագրական գաղափարներն ուղենիշ դարձան հայ ազգային հետագա պայքարի համար և սնուցեցին ազատագրական միտքը»[47]:

Այլ խոսքով, Օրու անձի ու գործի հետ է կապվում Հայաստանի քաղաքական ազատագրման խնդիրը, ուստի նա է համարվում հայ ժողովրդի՝ ռուսական կողմնորոշման սկզբնավորողը: Եվ այդ գաղափարի հիմնավոր պատմագիտական ձևակերպումը տվել է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը: Փաստավավերագիր նյութերի համադրական-քննական վերլուծությունների հիման վրա Ա. Հովհաննիսյանը, մեր կարծիքով ևս, իրավացիորեն մտահանգել է այն հետևության, որ «Ռուսական օրիենտացիան խմորուեց 1720-ական թվականների շուրջը, երբ նեղուած պարսից դէմ ապստամբած ցեղերից, հայ կղերի և մելիքութեան մի խոշոր հատուած հարկադրուած եղաւ փարել ռուսների օգնութեանը և նրանցից փրկութիւն յուսալ»[48]: Եվ այդ գործում, իբրև առաջին նախակարապետեր, անշուշտ, իրենց անուրանալի դերակատարությունն ունեցան Ի. Օրին և, մասամբ, Մինաս վարդապետը: Օրու կյանքի ու գործունեության վերաբերյալ Ա. Հովհաննիսյանի «Դրվագներում» և մյուս աշխատություններում առաջ քաշված մտքերն ու դատողությունները, կարելի է ասել, հիմնականում ուղեցույց են եղել խորհրդահայ և հետխորհրդային պատմագրության համար:

Բայց, այս ամենով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ, առհասարակ, այս կամ այն երկրի կամ պետության առջև ծառացած քաղաքական կողմնորոշումներին միակ հակակշիռը և հուսալի այլընտրանքն առաջին հերթին կարող է լինել սեփական ուժերին հավատալն ու ապավինելը: Այս կապակցությամբ տեղին է մտաբերել Մեծն Գ. Նժդեհի՝ քաղաքական բանաձևի նմանվող անկոտրում միտքն այն մասին, թե «Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յույսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զենքի վրայ»[49]:

Օտարի հետ քաղաքական հույսեր կապելը հղի է մեծ անհաջողություններով ու աղետներով, մյուս կողմից դա առաջ է բերում թերարժեքության բարդույթ սեփական ուժերի հանդեպ: Դա նաև գցում է սեփական զինուժի մարտունակությունը, վստահությունը սեփական ուժերի նկատմամբ՝ դրան հետևող նաև դասալքություն, բարոյահոգեբանական առումով՝ զորքի և

---

[47] *Հայոց պատմություն. 2010, 27:*
[48] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1921, 63:*
[49] *Ն ժ դ ե հ. 2006, 39:*

հասարակության մեջ անկումային ու պարտվողականության տրամադրություններ և այլն: Հայոց հազարամյա պատմությունից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: Դրա վառ օրինակներից են 1920 թ. Թուրք-հայկական պատերազմը և մեկ դար անց՝ 2020 թ., Արցախյան ձախողված պատերազմը:

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրանքը՝ կարելի է եզրակացնել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորման հարցում մենք հակված ենք ավելի հիմնավոր ու համոզիչ համարել Ա. Հովհաննիսյանի՝ նախկինում (1913–1921 թթ.) արտահայտած մոտեցումն ու տեսակետը, քանզի հետագայում՝ արդեն խորհրդային-կոմունիստական վարչակարգի պայմաններում, գործել է Ռուսաստանի փրկարար դերի և հայ-ռուսական դարավոր եղբայրության մասին գաղափարաքաղաքական նպատակահարմարության (կոնյունկտուրային) քարոզչամեքենան, որից հասկանալիորեն չէր կարող խույս տալ ո՛չ ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանը և ո՛չ էլ մեկ այլ պատմաբան-հետազոտող:

Արդի իրողությունների, հայ-ռուսական հարաբերությունների լույսի տակ Օրու և Մինաս վարդապետի՝ հայ-ռուսական քաղաքական կողմնորոշման հարցում «Դրվագներում» տրված գնահատականը, անշուշտ, չափազանցություն է: Այն չափազանցություն է ոչ միայն թույլ տրված առանձին կեղծիքներ անելու առումով, այլև նրանով, որ, ասենք՝ ինչպես կարելի է մեկ-երկու գործչի՝ անգամ ձեռքներին որևէ օրինական ու հիմնավոր փաստաթուղթ չունենալով, վարած բանակցությունների արդյունքով գնահատել, թե տեղի ունեցավ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման շրջադարձ, և որ, իբր, դրանով նոր դարագլուխ բացվեց հայ ժողովրդի պատմական ճակատագրում: Նման դատողությունները պատմական իրողություններից հեռու են և չի կարելի ընդունել որպես պատմական անվերապահ ճշմարտություն: Այս կապակցությամբ տեղին ու դիպուկ է ակադեմիկոս Ա. Մելքոնյանի պատմագիտական դիտարկումն այն մասին՝ մեզանում «Դեռևս հաղթահարված չէ այն կարծրատիպը, որ մեկ կամ մի քանի քաղաքական գործչի (ասենք՝ Ի. Օրու, Եսայի կաթողիկոսի – Ա. Հ.) գործելակերպով չի կարող ձևավորվել ամբողջ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը»[50]:

Այս ամենով հանդերձ, իհարկե, չի կարելի ժխտել նաև Ռուսաստանի քաղաքական շահերով թելադրված հետաքրքրությունը մեր տարածաշրջանում, ինչը օբյեկտիվորեն կարող էր իր նպաստը բերել հայերի ու Հայաստանի ազատագրական ձգտումներին: Արդի աշխարհաքաղաքական մարտահրավերների և իրողությունների լույսի տակ վերագնահատման ու վերարժևորման կարիք ունեն պատմական բնույթի շատ իրադարձություններ, այդ թվում՝ հայ ժողովրդի ռուսական քաղաքական կողմնորոշման գնահատականի հարցը:

Կարելի է հասկանալ, որ այն ժամանակվա պայմաններում դա անհրաժեշտություն էր՝ կապված Ռուսաստանի արտաքին քաղաքականության ռազմավարական շահերի և Հայաստանի, Արևմուտքի երկրների համեմատ, աշխարհագրորեն Ռուսաստանին ավելի մոտ լինելու հանգամանքի հետ: Այս իմաստով, թերևս, միակ հիմնավոր, անբեկանելի և գնահատանքի արժանի եզրահանգումն այն, որ XVIII դարասկզբին դեպի Անդրկովկաս ու Հայաստան Ռու-

[50] *Մ ե լ ք ո ն յ ա ն. 2021, 46:*

սաստանի նվաճողական ձգտումները, նկրտումները օբյեկտիվորեն համընկնում էին թուրք-պարսկական դժնդակ բռնակալական տիրապետությունից Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման բաղձանքներին: Սակայն այն ժամանակ տակավին պարզ չէր, թե արևելահայության՝ ռուսական հովանու տակ անցնելը քաղաքական առումով ի՞նչ կարող էր տալ, ինչի՞ կարող էր հանգեցնել: Բայցևայնպես, մեկ հարյուրամյակ անց՝ արդեն XIX դ. առաջին երեսնամյակին, Արևելյան Հայաստանի՝ Ռուսական կայսրությանը միացման հետևանքով հայ ժողովրդի մի հատվածի համար ստեղծվեց անհամեմատ սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, ազգային-մշակութային ու հոգևոր ապահովություն ու հետագա առաջընթացի հնարավորություններ:

Եզրակացություն

Այսպիսով, հայ պատմագիտության երախտավոր, կուսակցական ու պետական ականավոր գործիչ, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի՝ երկարամյա գիտահետազոտական գործունեությունը կարելի է բաժանել երկու շրջափուլի՝ նախախորհրդային և խորհրդային: *Նրա պատմագիտական հետազոտությունների կարևոր ոլորտներից է եղել հայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարի լուսաբանումը, որոնք ամփոփված են պատմաբանի բարձրարժեք մենագրություններում: Խորհրդահայ պատմագրության մեջ, հասկանալի պատճառով, հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման հարցում տրվել է չափազանցված գնահատական՝ ճակատագրական, բախտորոշ, բեկումնային, շրջադարձային և այլն: Պատմագիտական գնահատման առումով գիտականորեն ավելի հավասարակշռված ու հիմնավոր է ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի նախախորհրդային շրջանի աշխատություններում առաջ քաշած տեսակետն ու գնահատականը, մասնավորապես՝ Ի. Օրու և նրա գործունեության հետ կապված հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման ձևավորման հարցերում: Նրա ձևակերպմամբ, հայերի ռուսական կողմնորոշման սկզբնավորման մասին կարելի է խոսել սկսած 1720-ական թվականներից, երբ 1722 թ. Պետրոս Մեծի ձեռնարկած Կասպիական արշավանքի պայմաններում, Ռուսաստանի օգնությամբ Հայաստանն ազատագրելու ակնկալությամբ (հույսով) տարված, տեղի ունեցավ Արցախ-Սյունիքի ազատագրական պայքարը պարսկաթուրքական բռնատիրությունների դեմ: Այդ ամենի հետ, հարկ է արձանագրել, որ հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման երեք հարյուրամյա պատմության փորձն ու դասերը ցույց են տալիս, որ դա միանշանակ չի եղել. այն իր հետևից բերել է ոգևորության պահեր, քաղաքական վայրիվերումներ, նաև հիասթափություններ և այլն:*

Անցյալի պատմության փորձն ու դասերը ցույց են տալիս, որ արդի պատմաքաղաքական իրողությունների և Հայաստանի ու հայ ժողովրդի առջև ծառացած լուրջ մարտահրավերների պայմաններում սեփական ժողովրդի և հայրենիքի անվտանգության ապահովման ու առաջընթացի երաշխիք չեն կարող լինել արտաքին կողմնորոշումները: Սեփական ազգային ներուժն ու կարողություններն են միակ հուսալի երաշխիքը հայ ժողովրդի և իր հայրենիքի անվտանգության ապահովման ու առաջընթացի համար:

Արարատ Հակոբյան – պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի առաջին Հանրապետություն, հայ քաղաքական կուսակցությունների, ՀՀ պետականության կառուցվածքի, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, խորհրդային քաղաքական բռնաճնշումների, հայ պարբերական մամուլի հարցեր: Հեղինակ է 18 մենագրության, 12 անհատական կամ կոլեկտիվ ձեռնարկի ու ուսումնամեթոդական աշխատանքի և ավելի քան 100 հոդվածի:
ararathakobyan47@gmail.com

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ագաթանգեղոս. 1983, Հայոց պատմություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 700 էջ:

Անասյան Հ. 1961, 17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 443 էջ:

Դավիթ Անանուն. Աշ. Հովհաննիսեանի «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը».– «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» (Վաղարշապատ), 1921/1922, գիրք Ա և Բ, էջ 254–257:

Դիլոյան Վ. 1995, Հայ ազգային-ազատագրական շարժման «կողմնորոշման» հարցի շուրջ. – «Պայքար» (Բեստոն), № 5–6, էջ 13–18:

Զուլալյան Մ. 1980, Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 425 էջ:

Լեո. 1934, Խոջայական կապիտալ, Յեր., Պետհրատ, 372 էջ:

Լեո. 1984, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 592 էջ:

Հայոց պատմություն. 2010, հ. 3, գ. 1, Երևան, «Զանգակ» հրատ., 704 էջ:

Հովհաննիսյան Ա. 1921, Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը, էջմիածին, 89 էջ:

Հովհաննիսյան Ա. 1957, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 524 էջ, 1959, գ. 2, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, 696 էջ:

Հովհաննիսյան Ա. 1958, Հայերի ռուսական կողմնորոշման նախապատմությունից. – ՊԲՀ, № 1, էջ 65–109:

Հովհաննիսյան Ա. 2016, Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը, Երևան, «Ներքին գրոց» մատենաշար, 760 էջ:

Մանուկյան Ա. 1999, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920–1953 թթ., Երևան, «Առերեսում»-Անի հրատ., 264 էջ:

Մելքոնյան Ա. 2021, Պատմագիտական հետազոտություններ, Երևան, «Մեսրոպ արք. Աշճեան մատենաշար», 489 էջ:

Նժդեհ Գ. 2006, Հատընտիր, Երևան, «Ամարաս» հրատ., 708 էջ:

Յովհաննիսեան Ա. 1915, Յակոբ Զուղայեցու մի գրութիւնը Ռուս արքունիքին. – «Արարատ» (էջմիածին), թիւ Թ–Ժ (սեպտեմբեր-հոկտեմբեր), էլեկտրաշարժ տպարան մայր Աթոռոյ, էջ 775–781:

Ոսկանյան Վ. 1948, Հայ-ռուսական հարաբերությունները 17-րդ դարում.– «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ, № 1, էջ 76–89:

Ոսկանյան Վ. 1957, Հայ ժողովրդի ռուսական օրիենտացիայի հարցը մինչսովետական պատմագրության մեջ. – «Տեղեկագիր» Հայկ. ՍՍՌ ԳԱ հաս. գիտ., № 3, էջ 46–59:

Армяно-русские отношения в XVII веке (сб. док.). 1953. Ереван, Изд. АН АрмССР, 286 с.; Армяно-русские отношения в первой трети XVIII века. 1964, т. 2. Ереван, ч. 1, Изд. АН Арм ССР 396 с.; Армяно-русские отношения. 1967, т. 2. Ереван, Изд. АН АрмССР, 420 с.; Армяно-русские отношения. 1978, т. 3. Ереван, Изд. АН АрмССР, 409 с.

Эзов Г. А. 1898, Сношения Петра Великого с армянским народом. Документы. СПб, Типогр. Импер. акад. наук, 675 с.

ИСТОРИОГРАФИЧЕСКАЯ ОЦЕНКА АКАДЕМИКА АШОТА ИОАННИСЯНА ВОПРОСОВ РУССКОЙ ОРИЕНТАЦИИ АРМЯНСКОГО НАРОДА

АРАРАТ АКОПЯН

Р е з ю м е

Ключевые слова: А. Иоаннисян, армянский народ, Россия, Исраэль Ори, ориентация, историография, оценка, поворот, «Отрывки», Петр Великий, Ангехакот, Мюнхен, заключительная речь, независимость, покровитель, Минас вардапет, указатель.

Многолетнюю научно-исследовательскую деятельность заслуженного историка, выдающегося партийного и государственного деятеля, академика Ашота Иоаннисяна (1887–1972 гг.) можно разделить на два этапа: досоветский и советский. Одной из важных сфер его историографических исследований было освещение вековой освободительной борьбы армянского народа, что обобщено в его высокоценных монографиях. По понятным причинам в советской армянской историографии русской ориентации армянского народа давались преувеличенные оценки: судьбоносная, переломная, поворотная и т. п. С точки зрения исторической науки более взвешанными и обоснованными являются точка зрения и оценка А. Иоаннисяна, выдвинутые в его трудах досоветского периода, в частности, относительно вопросов формирования русской ориентации армянского народа, связанных с деятельностью Исраэля Ори (1659–1711 гг.). По его формулировке, о зарождении русской ориентации можно говорить начиная с 1720-х годов. В 1722 г., в условиях предпринятого Петром Великим Каспийского похода, в надежде освободить Армению с помощью России, произошла борьба Арцаха-Сюника против персидско-турецкой деспотии. Вместе с тем, следует констатировать, что опыт и уроки трехсотлетней истории русской ориентации армянского народа показывают, что эта ориентация не была однозначной,

она несла за собой мгновения воодушевления, политические шатания, а также разочарования.

В условиях современных историко-политических реалий и вставших перед армянским народом серьезнейших вызовов, опыт и уроки прошлого показывают, что внешние ориентации не могут быть гарантией безопасности и прогресса армянского народа и его родины. Только собственный национальный потенциал и возможности могут быть надежной гарантией обеспечения безопасности и прогрессивного развития армянского народа и Армении.

Арарат Акопян – д. и. н., проф., ведущий научный сотрудник отдела новейшей истории Института истории НАН РА. Научные интересы: Первая Республика Армения, армянские политические партии, государственно-правовая структура РА, турецко-армянская война 1920 г., Московский и Карсский договоры 1921 г., советские политические репрессии, армянская периодическая печать. Автор 18 монографий, 12 авторских и коллективных пособий, учебно-методического труда и более 100 статей.
ararathakobyan47@gmail.com

HISTORIOGRAPHICAL ASSESSMENT BY ACADEMICIAN ASHOT IOANNISYAN ON THE ISSUES OF THE RUSSIAN ORIENTATION OF THE ARMENIAN PEOPLE

ARARAT HAKOBYAN

S u m m a r y

Key words: A. Ioannisyan, Armenian people, Russia, Israel Ori, orientation, historiography, assessment, turning point, "Excerpts", Peter the Great, Ankeghakot, Munich, closing speech, independence, protector, Minas vardapet, indicator.

Long-term scientific and research activity of the distinguished historian and preeminent party and government leader academician Ashot Ionnisyan (1887-1972), can be divided into two stages: pre-Soviet and Soviet. One of the important areas of his historical and scientific researches was the coverage of centuries old liberation struggle of the Armenian people that is summarized in his valuable monographs. For obvious reasons, the Soviet Armenian historiography gave an exaggerated assessment to the Russian orientation of the Armenian people, such as fateful, critical, turning point, etc. From the point of view of historical science, A. Ioannisyan's opinion and assessment put forward in his works of the pre-Soviet period appear to be more balanced and reasonable, particularly, on the issues of the Russian orientation of the Armenian people in connecttion with the activities of Israel Ori (1659-1711). On his formulation, the

Պատմաբանասիրական հանդես 2022 № 3 Историко-филологический журнал

origin of the Russian orientation dates back to the beginning of the 1720s. In 1722, during the Caspian campaign undertaken by Peter the Great, in the hope to liberate Armenia with the help of Russia, Artsakh and Syunik started their struggle against the Persian-Turkish tyranny. At the same time, it should be stated that experience and lessons of the three hundred year history of the Russian orientation of the Armenian people suggests that this orientation was not unambiguous; it carried moments of inspiration, political wobbles as well as disappointments.

In the context of contemporary historical and political realities and the most serious challenges facing the Armenian people, the experience and lessons of the past show that foreign orientations cannot be guarantee of security and progress of the Armenia people and their homeland. Only our own national capacities and capabilities can be reliable guarantee of security and progressive development of the Armenian people and Armenia.

Ararat Hakobyan – Doctor of Historical Sciences, Proffessor, Leading Researcher at the Department of the New History of the Institute of History of NAS of RA. Scientific interests: The First Republic of Armenia, Armenian political parties, state-legal structure of RA, Turkish-Armenian war in1920, Moscow and Kars Treaties of 1921, Soviet political repressions, Armenian periodical press. Author of 18 monographs, 12 authorial and collective manuals and educational-methodical works, more than 100 articles.
ararathakobyan47@gmail.com